

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՑՅԱԼ ԻՆՍՏԻՏՈՒՏ

/ընդհանուր նկարագիր/

Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտը (ՄՀՄԻ) ստեղծվել է 1956թ. մարտի 26-ին 11 հիմնադիր երկրների կառավարությունների ներկայացուցիչների կողմից Մոսկվայում ստորագրված Համաձայնագրի հիման վրա՝ նպատակ ունենալով համախմբելու իրենց գիտական և նյութական ներուժը՝ նյութի հիմնարար հատկությունները հետազոտելու համար: 1957 թ. փետրվարի 1-ին ՄՀՄԻ-ն գրանցվեց ՄԱԿ-ի կողմից: Ինստիտուտը գտնվում է Ռուսաստանի Դաշնությունում՝ Մոսկվայից 120 կմ հեռավորության վրա՝ Դուբնա քաղաքում: Այսօր Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտը համաշխարհային ճանաչում ունեցող գիտական կենտրոն է, որտեղ հիմնարար հետազոտությունները (տեսական և փորձարարական) հաջողությամբ համադրվում են նորագույն տեխնոլոգիաների մշակման, ներդրման և համալսարանական կրթության հետ:

Համաշխարհային գիտական հասարակության մեջ ՄՀՄԻ-ի վարկանիշը շատ բարձր է: ՄՀՄԻ-ի անդամ է 18 երկիր: Պետական մակարդակով ինստիտուտը համաձայնագրեր է կնքել Հունգարիայի, Գերմանիայի, Իտալիայի, Սերբիայի և Հարավաֆրիկյան հանրապետության հետ: ՄՀՄԻ-ին միջազգային մասշտաբի ինստիտուտի կարգավիճակ ունի: Նրա բարձրագույն ղեկավար մարմինը 18 անդամ-երկրների կառավարությունների լիազոր ներկայացուցիչներից կազմված կոմիտեն է: Ինստիտուտի գիտական քաղաքականությունը մշակում է գիտական խորհուրդը, որի կազմում, անդամ-երկրների հայտնի գիտնականներից բացի, ընդգրկված են նաև հայտնի ֆիզիկոսներ Գերմանիայից, Իտալիայից, ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Միջուկային հետազոտությունների եվրոպական կազմակերպությունից:

ՄՀՄԻ-ի տեսական և փորձարարական հետազոտությունների հիմնական ուղղություններն են տարրական մասնիկների ֆիզիկան, միջուկային ֆիզիկան և խտացված միջավայրերի ֆիզիկան: ՄՀՄԻ-ի գիտական ծրագիրն ուղղված է գիտության մեջ սկզբունքային նշանակություն ունեցող բարձրարժեք արդյունքների ձեռքբերմանը: ՄՀՄԻ-ի կազմում գործում է յոթ լաբորատորիա, որոնցից յուրաքանչյուրն իր իրականացրած հետազոտությունների ծավալով համարժեք է մի մեծ ինստիտուտի: Ինստիտուտում աշխատում է շուրջ 4500 մարդ, այդ թվում՝ ավելի քան 1200 գիտական աշխատող (որոնց թվում՝ գիտությունների ազգային ակադեմիաների իսկական և թղթակից անդամներ, գիտության ավելի քան 260 դոկտոր և 570 թեկնածու): Շուրջ 2000 հոգի ընդգրկված է

ինժեներատեխնիկական անձնակազմում: Ինստիտուտը կապեր ունի աշխարհի 62 երկրների մոտ 800 գիտական կենտրոնների և համալսարանների հետ. միայն Ռուսաստանում, որը ՄՀՄԻ-ի գլխավոր ներդրողն է, համագործակցություն է իրականացվում 55 քաղաքի 170 հետազոտական կենտրոնների, համալսարանների, արտադրական ձեռնարկությունների և ֆիրմաների հետ: Ինստիտուտի գիտական ծրագրի իրականացմանը մասնակցում են ԱՊՀ 10 երկրների ավելի քան 260 գիտական կենտրոն, համալսարան և ձեռնարկություն:

Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտը փոխշահավետ կապեր է պահպանում ՄԱԳԱՏԵ-ի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի, Եվրոպական ֆիզիկոսների հանրության՝ Տրիեստի տեսական ֆիզիկայի միջազգային կենտրոնի հետ: Ամեն տարի ՄՀՄԻ-ի հետ համագործակցող կազմակերպություններից Դուբնա է այցելում ավելի քան 1000 գիտնական: Զարգացող երկրների ֆիզիկոսներին ինստիտուտը տրամադրում է կրթաթոշակներ: Միացյալ ինստիտուտի գիտնականները մշտապես մասնակցում են միջազգային ու ազգային գիտական կոնֆերանսների: Իր հերթին ինստիտուտը տարեկան կազմակերպում է մոտ 10 խոշոր կոնֆերանս, ավելի քան 30 միջազգային խորհրդակցություն, ինչպես նաև, արդեն ավանդական դարձած, երիտասարդ գիտնականների դպրոցներ: ՄՀՄԻ-ի կրթական ծրագրի ընդհանուր համակարգումն ու օժանդակությունն իրականացնում է ինստիտուտի հատուկ ստորաբաժանումը՝ գիտակրթական կենտրոնը:

ՄՀՄԻ-ին է պատկանում միջուկային ֆիզիկայի բնագավառում կատարված ավելի քան 40 հայտնագործություն: Ժամանակակից ֆիզիկայի և քիմիայի բնագավառում ինստիտուտի ունեցած մեծ ներդրման համար, ի նշան երախտագիտության, Ընդհանուր և կիրառական քիմիայի միջազգային միության (IUPAC) որոշմամբ Մենդելևեի պարբերական աղյուսակի 105-րդ տարրն անվանվել է Dubnium (Db):

Ինստիտուտի վերջին ձեռքբերումներից է գերծանր տարրերի հետազոտման ծրագիրը: Դուբնայի գիտնականների շնորհիվ առաջին անգամ սինթեզվել են նոր գերծանր քիմիական տարրեր՝ որոնք համալրել են Մենդելևեի պարբերական աղյուսակի 113-ից 118-րդ տեղերը: Ի դեպ, 118-րդ տարրն անվանվել է Oganesson (Og)՝ ինստիտուտի Գ. Ֆյոբովի անվան միջուկային ռեակցիաների լաբորատորիայի գիտական ղեկավար, հայ մեծ գիտնական Յուրի Յոլակի Հովհաննիսյանի պատվին: